ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-29/26-IS/IOS

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Գոհար Մանվելի Իսկանդարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 219 111 400 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,

2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 219 111 400 << դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀՎՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պ., 24/4 Հ/հ՝ 900018005299 ՀՎՀՀ՝ 00009554 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.
Կարեն Բորիսի Ղարիբյան	Գոհար Մանվելի Իսկանդարյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Գոհար Իսկանդարյան Մանվելի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-29/26-IS/IOS պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Գոհար Մանվելի Իսկանդարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-29/26-IS/IOS պայմանագրի գնի վերաբերյալ՝ 219 111 400 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Կ. Տ.

Գոհար Մանվելի Իսկանդարյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-29/26-IS/IOS պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	15
Այլ պարբերականում հրապարակում՝	23
Գրքեր, մենագրություններ՝	5
Գիտաժողովի նյութեր՝	10

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Գոհար Մանվելի Իսկանդարյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Հարությունյան Եվա Վիկտորի

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-29/26-IS/IOS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	207 380 188	41 476 037	51 845 047	51 845 047	62 214 057
2.	տնտեսական ծախսեր՝	4 570 000	914 000	1 142 500	1 142 500	1 371 000
3.	այլ ծախսեր՝	7 161 212	1 432 242	1 790 303	1 790 303	2 148 364
Ընդամենը՝		219 111 400	43 822 279	54 777 850	54 777 850	65 733 421

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Գոհար Մանվելի Իսկանդարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Շամխորի Ստեփանյան

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-29/26-IS/IOS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

<< դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**4 570 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 550 000
2.	*գազի ծառայություն*	550 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	410 000
4.	*կապի ծառայություն*	780 000
5.	*աղբահանություն*	0
6.	Տնտեսական ապրանքներ և նյութեր	780 000
7.	Տնտեսական այլ ծախսեր	500 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**7 161 212**
1.	Գործուղումներ	1 100 000
2.	Գիտաժողովների կազմակերպում	500 000
3.	Գրքերի տպագրություն	1 500 000
4.	Սարքեր, սարքավորումներ	1 100 000
5.	Այլ ծախսեր	2 961 212

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Գոհար Մանվելի Իսկանդարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Շամխորի Ստեփանյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025 թ.
N1-29/26-IS/IOS պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիր» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Հետազոտական ծրագրի նպատակն է ուսումնասիրել Մերձավոր և Միջին Արևելքի, Հարավարևելյան Ասիայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնոդավանական հիմնախնդիրները, ինչպես նաև պատմության, քաղաքագիտական, միջազգային հարաբերությունների ոլորտներում առկա հարցերը, որոնք օգնում են հասկանալու Հայաստանի հարակից տարածաշրջանների պատմական զարգացումները, հասարակական–քաղաքական և սոցիալ – տնտեսական գործընթացների դինամիկան, աշխարհաքաղաքական փոփոխությունները և անվտանգության խնդիրները: Այն նաև վերաբերում է հին, միձնադարյան և նոր շրջանի աղբյուրների ուսումնասիրությանը, որոնք հնարավորություն են տալիս վերլուծելու Հայաստանի և հայերի դերն ու նշանակությունը տարածաշրջանային և միջազգային հարաբերությունների համատեքստում, ինչպես նաև Հայաստանի և հայակից երկրների քաղաքական ու սոցիալական հարաբերությունները տարբեր ժամանակահատվածներում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Հեռավոր Արևելքի երկրների ներքին կյանքի՝ հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական

բարձր նշանակություն: Իրանի, Թուրքիայի և արաբական երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումների օրինաչափությունների խորքային ուսումնասիրությունը՝ յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները հաշվի առնելով, համարվում է արևելագիտության առջև ծառացած գլխավոր մարտահրավերներից: Այս համատեքստում կարևորվում է Մերձավորարևելյան, Արևելասիական և Այսրկովկասյան աշխարհաքաղաքական համակարգերի, դրանց տարրերի (Արաբական աշխարհ, Թուրքիա, Իրան, Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ ցույց տալով դրանց միջև ռազմավարական տեղաշարժերը, գլոբալ իրողությունների փոփոխությունները, ինչպես նաև միջազգային ու տարածաշրջանային հարաբերությունների զարգացումները: Ընդգծվում է, որ պետք է մեծ ուշադրություն դարձվի քաղաքական, տնտեսական, ռազմավարական ու միջազգային գործոնների ուսումնասիրությանը, որոնք ազդում են աշխարհաքաղաքական այս համակարգերի ձևավորման վրա, առաջացնում գլոբալ տեղաշարժեր և նոր մարտահրավերներ: Ուսումնասիրության ընթացքում ուշադրություն է դարձվելու Հայաստանի՝ որպես միջազգային և տարածաշրջանային գործոն, քանի որ դրանք անմիջականորեն կապված են Հայաստանի ազգային անվտանգության, սոցիալ-տնտեսական զարգացման և նրա միջազգային ու տարածաշրջանային հարաբերություններում ունեցած դերի հետ: Ըստ այդմ, մեծ նշանակություն է ունենալու վերոնշյալ հիմնախնդիրներին վերաբերող սկզբնաղբյուրների հայթայթումն ու նրանց հիմնառարկայական ուսումնասիրությունը: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի նաև հին արևելյան աղբյուրների երկու խմբի՝ հինարևելյան սեպագիր աղբյուրների և պատմողական աղբյուրների ուսումնասիրությանը, ինչպես նաև Հայաստանի և հայերի մասին հին, միջնադարյան և նոր շրջանի աղբյուրների վերլուծությանը: Այնուհետև, կարևոր կլինի նաև Այսրկովկասյան երկրների բազմալեզու սկզբնաղբյուրների վերծանությունը, թարգմանությունը և ուսումնասիրությունը՝ այդ աղբյուրների պատմողական, վիճակագրական և վավերագրական բնույթը հաշվի առնելով:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ծրագրի կատարման աշխատանքներում ընդգրկված են 51 գիտաշխատող, այդ թվում՝ 1 ակադեմիկոս, 11 պատմական գիտությունների դոկտոր, 25 պատմական

գիտությունների թեկնածու: Ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի յոթ ստորաբաժանումների՝ Քրիստոնյա Արևելքի, Արևելյան Աղբյուրագիտության և պատմագրության, Հին արևելքի, Թուրքիայի, Իրանի, Արաբական երկրների և Միջազգային հարաբերությունների բաժինների ներգրավվածությամբ:

Այս գիտակազմն ընդգրկում է ինչպես պատմագիտական, այնպես էլ լեզվաբառարանական, մշակութաբառարանական և աշխարհաքաղաքական հարցեր, որոնց վերաբերյալ համապատասխան թեմատիկ բաժանումներ են առանձնացվել:

Գիտական թեմատիկ բաժանումները՝

➢ Սեպագիր աղբյուրների հիման վրա ուսումնասիրվում են Խեթական պետության պատմության հիմնահարցերը՝ լեզվաբառարանական կապերը, էթնիկ տեղաշարժերը, քաղաքական հարաբերությունները, տեղագրությունն ու Հելլենիստական Արևելքի սոցիալ-քաղաքական ու տնտեսական պատմությունը:

➢ Արդի աղբյուրների և նոր հայտնաբերված փաստաթղթերի հիման վրա իրականացվում են հետազոտություններ Բյուզանդական կայսրության պատմության մասին, հատկապես ուշադրության կենտրոնում է հայ-բյուզանդական քաղաքական ու կրոնական փոխհարաբերությունների վերլուծությունը:

➢ Ուսումնասիրվում են Աղվանքի և միջնադարյան Վրաստանի պատմության ու մշակույթի հիմնահարցերը, ինչպես նաև Արցախի գրչօջախները, Շուշիում իրանական մակույթի ազդեցությունը, Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատմության խնդիրները:

➢ Համեմատական վերլուծության են ենթարկվում հայկական, բյուզանդական, արաբապարսկական, վրացական և օսմանյան աղբյուրները, որոնք ապահովում են միջնադարյան քաղաքական, սոցիալ-մշակութային ու տնտեսական դինամիկայի ամբողջական պատկերացումը:

➢ Ուսումնասիրվում է թյուրքախոս ժողովուրդների պատմությունը, որոնք ներթափանցել են տարածաշրջան և հիմնադրել պետականություններ՝ հատկապես ուշադրություն դարձնելով նրանց մշակութային ու քաղաքական ազդեցությանը:

Հետազոտության առարկա է նաև Օսմանյան կայսրության ձևավորումն ու ընդլայնումը, ծավալապաշտական քաղաքականությունը, բազմազգ պետության կառավարման համակարգը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև

ազգայնական գաղափարախոսությունները, այդ թվում՝ ցեղասպան քաղաքականությունը, պանիսլամիզմի ու պանօսմանիզմի դրսևորումները:

➢ Թարգմանվում և վերլուծվում են հայատառ թուրքերենով նորահայտ վավերագրեր, որոնք օգնում են բացահայտել պատմական մանրամասնությունները:

➢ Հետազոտություններ են իրականացվում Իրանի 17-19–րդ դարերի քաղաքականության և թուրք-պարսկական պատերազմների հետևանքով ձևավորված նոր քաղաքական իրողությունների վերլուծության շուրջ:

➢ Վերլուծվում է Ռուսական կայսրության արևելյան քաղաքականությունը՝ համադրելով ռուս-բրիտանական առճակատման և Արևելյան հարցի զարգացումներին:

➢ Հետազոտվում է Քեմալական շարժման առաջացման դրդապատճառները, գաղափարական էությունը, նաև 20-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիայում տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական ճգնաժամերը:

➢ Ուսումնասիրության կենտրոնում է նաև Ադրբեջանի պետության առաջացման պատմությունը, դրա արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված զարգացումները:

➢ Կենտրոնական Ասիայի, Պակիստանի և Աֆղանստանի էթնոդավանական պատկերի ուսումնասիրությունը, ինչպես նաև Պակիստան-Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի դերը:

➢ Հետազոտվում է սոցիալ-քաղաքական բուրգերի կազմը, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, «Արաբական գարունը» և սիրիական ճգնաժամը՝ Թուրքիայի և Ադրբեջանի ազդեցության շեշտադրումներով:

➢ Հետազոտման ուղեծիրում է նաև Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը, Իրանի և Ադրբեջանի միջև կրոնական և քաղաքական հարաբերությունները, ինչպես նաև Իրանի Իսլամական հեղափոխության արտահանմանը, Իրանի պետական համակարգի, հայ-իրանական հարաբերությունների զարգացման պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները:

➢ Ուսումնասիրվում է քրդական ազգային շարժման ձևավորումը, «քրդական հարցի» լուծման հեռանկարները, ինչպես նաև քրդական գործոնը սիրիական ճգնաժամում:

➢ Կարևորվում են Իսլամական կազմակերպությունների գործունեությանը, իսլամի և քրիստոնեության քաղաքակրթությունների երկխոսությանը վերաբերող հետազոտությունները:

➢ Ուսումնասիրվում է Չինաստանի արտաքին քաղաքականությունը, Մեկ գոտի, մեկ ճանապարհ նախաձեռնությունը և ՉԺՀ-ի աճող դերը միջազգային հարաբերություններում:

➢ Հետազոտվում է Ճապոնիայի նորագույն պատմությունը, ինչպես նաև նրանց ներգրավվածությունը Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանային քաղաքականությունում:

➢ Հետազոտվում է Հնդկաստանի նորագույն պատմությունը, վերջինիս դերը հաղորդակցային միջանցքների զարգացման գործընթացներում:

Այս թեմաները ընդգրկում են ոչ միայն պատմական, այլև քաղաքական, սոցիալական և մշակութային հարցեր, որոնք վերաբերվում են Հարավային Կովկասի, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների պատմությանը և նրանց ազդեցությանը միջազգային հարաբերությունների վրա:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Գոհար Իսկանդարյան (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) Գոհար Իսկանդարյան (անուն ազգանուն)

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-29/26-IS/IOS պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիր» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը: Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը»	Ծրագիրն իր մեջ ներառում է մի քանի ուղղություններ՝ Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը, Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը, Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Սույն Ծրագիրն իր բնույթով և հիմնախնդիրների ընդգրկումով, բազմապլանային է և ընդգրկում է ՀՀ արտաքին քաղաքականության համար քաղաքական,	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	05.01.2026-31.03.2026

		հասարակական, սոցիալական և տնտեսական կարևորագույն խնդիրներ		
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 04. 2026-30. 06. 2026
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 07. 2026-30. 09. 2026
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 10. 2026-30. 12. 2026

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Գոհար Իսկանդարյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն) Գոհար Իսկանդարյան
(անուն ազգանուն)